# ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆՔ ԱՇԽԱՐՀԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՈՒՆԴԸ՝



# ՄԱՅՐԱԿԱՆ ԿԱԹԸ

Բոլոր մանուկները
սիրում են այն:
Էժան է: Անարատ:
Միշտ թարմ:
Կարիք չունի տաքացվելու
կամ սառեցվելու:
Պատրաստ է մատուցման:

«Նախքան փոքրիկիս ծնվելը մտահոգ էի, որ կաթս չի բավարարի նրան, կամ կլինի նոսր ու անորակ: Բայց, երբ հայտնաբերեցի կրծքով սնուցման նոր նախադրյալները, հաղթահարեցի մտավախությունները: Հետեւելով մի քանի պարզ ցուցումների դուք էլ կարող եք հաջողությամբ կրծքով կերակրել ձեր մանկիկին»:

## Հետեւե՛ք ցուցումներին՝ կհասնեք հաջողության



Սկսեք կրծքով կերակրել ծննդաբերությունից անմիջապես հետո՝ կես ժամվա ընթացքում, հենց ծննդատանում: Որքան շուտ, այնքան լավ:



Ո՛չ կաթ, ո՛չ ջուր, ո՛չ թեյ, ո՛չ հյութ: Ոչի՛նչ հարկավոր չէ, բացի մայրական կաթից առաջին 4-ից 6 ամսում:



Հիվանդանոցում երեխային միշտ ձեր սենյակում պահեք: Այսպիսով կարող եք հաճախ կերակրել թե՛ ցերեկը եւ թե՛ գիշերը:



Ռեժիմով մի՛ կերակրեք: Կերակրեք ցանկացա՛ծ եւ ցերեկը, եւ գիշերը: Հաճախ կերակրեք: Հաճախակի կերակրումները կնպաստեն կաթնարտադրությանը:

**Կերակրե՛ք միա՛յն ու միայն կրծքով 4-ից 6 ամիս:**

Մայրական կաթ: Սա միակ սննդոցն է, որն անհրաժեշտ է երեխային կյանքի առաջին 4-ից 6 ամսում: Այն փոքրիկին կպաշտպանի վարակիչներից:

**Մի՛ մտահոգվեք ձեր կաթի քանակի ու որակի համար:**

Մի՛ մտահոգվեք, որ աղքատիկ սնունդը կվնասի ձեր կաթնարտադրությանը: Նույնիսկ քիչ սնվելով դուք երեխային կպահովեք բավարար սննդարար կաթով:



Կրծքով կերակրելու նոր ցուցումների գրքույկը ձեռք բերելու համար դիմեք ձեր շրջանի պոլիկլինիկա

«Դարբնական» հրատարակչության տպարան, Երեւան 23 Արտադրական 2 Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատվեր 1853 Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 26. 09. 1994 Գինը՝ 10 դրամ